ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

23-ը օգոստոսի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 23-ը մեզ համար շրջադարձային ու հիշարժան ամսաթիվ է. այսօր նշում ենք Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման 35-րդ տարեդարձը, որի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս:

Հայաստանի անկախացման գործընթացը բարդ, վճռորոշ, բայց նաև սպասված ու բաղձալի իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագիրը 12 կետերով ամփոփում էր հայության տասնամյակների իղձերն ու նվիրական ցանկությունները Հայաստանն ու Արցախը վերամիավորելու, ինքնիշխան պետականություն կերտելու, սեփական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու և արարելու մասին:

Սիրելի՛ հայրենակիցներ.
Հայ ժողովրդի միասնական կամքով, բազում դժվարություններով ձեռքբերված, անդառնալի կորուստներով պահպանված ու մեզ փոխանցված անկախությունը թանկ արժեք է, որի հարատևմանը պիտի ուղղվի յուրաքանչյուրիս հետևողական ու սրտացավ գործունեությունը:

Արժևորելով ՀՀ Անկախության հռչակագրի դրույթներն ու սկզբունքները՝ կրկին շնորհավորում եմ բոլորիս այս պատմական օրվա առիթով. մաղթում եմ հռչակագրի ընդունման օրինակով լինենք համախմբված մեր հայրենիքի անկախության, պետականության և ազգային ինքնության պահպանման նվիրական գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ